

ՀՏԴ: 929:891.981Զարենց+929:78(479.25)Պերպերյան
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-36

**ԷՋԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՉԱՐԵՆՑԱՊԱՏՈՒՄԻՑ.
ՀԱՄԲԱՐԾՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ “REQUIEM AETERNAM” ԿԱՆՏԱՏԸ**

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ*

Հղման համար. Ասատրյան, Աննա: «Էջեր երաժշտական չարենցապատումից. Համբարծում Պերպերյանի “Requiem Aeternam” կանտատը»: *Արվեստագիտական հանդես*, N 1 (2024): 36-48. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-36

Հոդվածում ներկայացված են երաժշտական չարենցապատումի էջերը:

Սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարծում Պերպերյանը (1905-1999) Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ 1972 թվականին գրեց “Requiem Aeternam” կանտատը (Կոմիտասի հիշատակին)¹ երգչախմբի և նվագախմբի համար:

Կանտատի հիմքում Չարենցի «Requiem Aeternam» (Կոմիտասի հիշատակին) ստեղծագործությունն է, որը բանաստեղծն սկսել է գրել Կոմիտասի հուղարկավորությունից երկու օր անց՝ 1936 թվականի մայիսի 30-ին և ավարտել նոյեմբերի 30-ի ու զիջերը:

Կանտատի տեքստը հայերեն է, սակայն օտարախոս կատարողներին մատչելի դարձնելու նպատակով տեքստը տրված է նաև լատինատառ: Կանտատի տեքստը Դիանա Տեր-Հովանեսյանը և Մարգարետ Մարկոսյանը թարգմանել են անգլերեն, որը տեղ է գտել կլավիրի վերջում:

Կանտատը բաղկացած է 14 համարից. խմբերգային և մենակատար համարներն իրար են հաջորդում առանց ընդմիջման: Կոմպոզիտորը Չարենցի պոեմից ընտրել է տարբեր հատվածներ: Այսպես՝ N1-ում օգտագործել է պոեմի Դ, ապա՝ Բ տների տեքստերը, N2-ում՝ Է և Ժ տները, N3-ում՝ Զ, Ը և ԾԲ տները և այլն:

“Requiem Aeternam”-ի առաջին կատարումը 1975-ին Դետրոյտում ամերիկյան երգչախմբի մեկնաբանությամբ արժանացավ հասարակության ջերմ ընդունելությանը:

“Requiem Aeternam”-ը Երևանում հնչել է հեղինակի ղեկավարությամբ: 1982-ին Համբարծում Պերպերյանին շնորհվել է Հայաստանի կոմպոզիտորների միության «Կոմիտաս» ամենամյա մրցանակը՝ որպես «արտասահմանում լավագույն հայ կոմպոզիտոր-պրոպագանդիստի»:

Քանալի բառեր² երաժշտական չարենցապատում, Եղիշե Չարենց, Համբարծում Պերպերյան, “Requiem Aeternam” կանտատը երգչախմբի և նվագախմբի համար, 1972 թվական, 1982 թվական, Հայաստանի կոմպոզիտորների միության Կոմիտաս մրցանակ:

Ներածություն

Ինչպես հայտնի է՝ հայ գրականությունը մեծապես խթանել է ազգային երաժշտարվեստի զարգացումը:

Հայ բանաստեղծների տեքստերով գրվել են բազմաթիվ ստեղծագործությո-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, annaasatryan2013@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20.09.2023, գրախոսելու օրը՝ 03.05.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

յուններ՝ ինչպես օպերաներ, վոկալ, վոկալ-սիմֆոնիկ և կամերային, այդ թվում՝ երգեր և ռոմանսներ, այնպես էլ սիմֆոնիկ երկեր ու բալետներ: Բավական է հիշել երաժշտական թումանյանապատումն իր բազմազան դրսևորումներով, որոնց առիթ ենք ունեցել քանիցս անդրադառնալու:

Երաժշտական չարենցապատումի օպերային էջը՝ Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերան

Եղիշե Չարենցի երկերը նույնպես արժանացել են հայ կոմպոզիտորների ուշադրությանը և հիմք ծառայել տարբեր ժանրերի արժեքավոր ստեղծագործությունների համար: Բավական է նշել հայ տաղանդավոր կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ավետ Տերտերյանի (1929-1994)՝ 2 գործողությունից և 8 պատկերից բաղկացած «Կրակե օղակ» օպերան, որի լիբրետոն Վադիմիր Շահնազարյանը կազմել էր ըստ Բորիս Լավրենյովի «Քառասունմեկերորդը» պատմվածքի, Չարենցի «Ամբոխները խելագարված» և «Սոմա» պոեմների ու բանաստեղծությունների:

«Կրակե օղակ» օպերայի համար բանաստեղծական կամերտոն դարձած «Ամբոխները խելագարված» պոեմը կարևոր նշանակություն ունեցավ Ավետ Տերտերյանի ստեղծագործական հետագա գործունեության համար: Ինչպես նկատել է արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուսկյանը. «Грандиозная идея этой поэмы, ее энергетика буквально завораживали композитора. Ее образы ожили в опере, но они не исчерпались для него; эта поэма своим крылом касалась почти каждого следующего произведения Тертеряна, причем уже не программного, не театрального, но симфонического» [9, էջ 45]:

Օպերայի համար Ա. Տերտերյանի՝ Չարենցի «Սոմա» պոեմի ընտրության մեջ դրսևորվեցին կոմպոզիտորի հատուկ հետաքրքրությունները, որոնք շուտով իրական հիմք դարձան բուդդիստական մշակույթի ավանդույթներին մերձեցման, Հնդկաստանի փիլիսոփայության հետ ծանոթության համար:

Այս պոեմը ևս կարևոր դեր ունեցավ Տերտերյանի ստեղծագործական ճակատագրում: «...Поэма «Сома» стала для Авета Тертеряна своего рода философским кристаллом, в котором во всех мыслимых и немыслимых гранях отражался мир, будя воображение. Одухотворение поэта божественным видением немеркнувшего света отозвалось в композиторе духовным откровением, и не случайно – вспомним его тяготение к До мажору. Читая эту поэму, как-то особенно ясно ощущаешь родство темпераментов Чаренца и Тертеряна, свободу их поэтических видений, стремление к этой свободе. Внезапно озаряет догадка, а не поэма ли «Сома» благословила Тертеряна на его пути к симфонизму?!» [9, էջ 41].

«Կրակե օղակ» օպերան Ավետ Տերտերյանը գրել է 1967 թվականին: Նույն թվականին օպերան բեմադրվել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում: Բեմադրող ռեժիսորներն էին Լև Միխայլովն ու Վահագն Բազրատունին, գլխավոր դիրիժորը՝ Արամ Բաթանյանը, դիրիժորի ասիստենտն էր կոմպոզիտորի եղբայրը՝ Գերման Տերտերյանը, խմբավարը՝ Ռուբեն Այվազյանը, իսկ բեմանկարիչը՝ Մինաս Ավետիսյանը:

Պարերը բեմադրել էին Վանուշ Խանամիրյանն ու Վիլեն Գալստյանը:

«Мне особенно запомнилась генеральная репетиция 25 ноября 1967 года, которая происходила при большом стечении публики,- հետագայում կիսուսովանի կոմպոզիտորը, - Казалось, вся музыкальная и театральная общественность города была в зале. Помню, что для нас с режиссером не нашлось места, и мы простояли весь спектакль. Овация длилась долго, но все мы были в таком состоянии, что вообще не могли воспринимать что-то, а мой брат даже не смог выйти на вызовы, потому что был в состоянии колоссального нервного напряжения. В этот день от него зависело все... И он блестяще провел спектакль» [9, էջ 45].

Օպերայի պրեմիերան մեծ հաջողությամբ տեղի ունեցավ 1967 թ. դեկտեմբերի 2-ին. «Опера захватила с первых же тактов и так, до конца, слушалась с неослабевающим интересом, а местами с подлинным напряжением. Успех был большой, интерес к ней – единодушный. Всем было ясно – в армянской музыке появилось сочинение очень значительное и по масштабу, и по художественному воплощению» [9, էջ 45].

1972-ին Մոսկվայում հրատարակվեց օպերայի կլավիրը:

Ի դեպ՝ Տերտերյանն ինքը, խոսելով օպերայի մասին, նշել էր, որ իր օպերան պատերազմի, խաղաղության և սիրո մասին է: Պատմության մեջ մարդու դերը, նրա վարքագիծը... Հենց այս մասշտաբային թեմայի վրա հետագայում կոմպոզիտորը կառուցեց իր մյուս ստեղծագործությունները:

Օրինաչափ է օպերայի դրամատուրգիայում երգչախմբին հատկացված չափազանց մեծ դերը: Այն մեկնաբանվում է որպես պատմության, դարաշրջանի, ժողովրդի ծայն, որպես «իրադարձությունների մասնակից ու ականատես, տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ հեղինակային վերաբերմունքի արտահայտիչ՝ կարեկցող, զգուշացնող, մերկացնող...» [12, էջ 32]:

«Կրակե օղակի» պրեմիերայից հետո վերադարձավ Արամ Քաթանյանը, և օպերան հաջողությամբ ներկայացվեց հաջորդ թատերաշրջանում: Շուտով օպերան հանվեց խաղացանկից, քանի որ, ականատեսների վկայությամբ, Չարենցի դուստրը՝ Արփենիկ Չարենցը հանդես էր եկել ջախջախիչ հողվածով և քարը քարին չէր թողել:

Այդուամենայնիվ՝ 1974-ին «Կրակե օղակ» օպերան բեմադրվեց Հալլեի (ԳԴՀ) պետական երաժշտական թատրոնում՝ թատրոնի գլխավոր դիրիժոր Հանս Վենցելի ղեկավարությամբ և ունեցավ մեծ հաջողություն [9, էջ 56-59]:

Տարիներ անց ծագեց օպերայի երկրորդ խմբագրության անհրաժեշտությունը, որն իրականացրեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գլխավոր ռեժիսոր Տիգրան Լևոնյանը՝ վերնագրելով այն «Դեպի արևն էին գնում, կամ ամբոխները խելագարված»: Օպերան ստանում է նոր տեսք. գործողությունը, փաստորեն, ծավալվում է բալետում և մնջախաղում, իսկ վոկալ երգամասները՝ երգչախմբի և նվագախմբի հետ, հնչում են որպես ֆոն: Սա դարձավ վառ նորարարական իրադարձություն ժամանակակից օպերայի աշխարհում: Օպերայի պրեմիերան կայացավ Երևա-

նում 1977 թ. դեկտեմբերի 10-ին: Բեմադրող ռեժիսոր՝ Տիգրան Լևոնյան, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, դիրիժոր՝ Արամ Քաթանյան, խմբավար՝ Ռուբեն Այվազյան, խորեոգրաֆ՝ Աշոտ Ասատուրյան:

Այս բեմադրությունը ևս երկար կյանք չունեցավ: Արվեստիկ Զարենցը դարձյալ հանդես եկավ հողվածով, սակայն այս անգամ՝ դրվատական: Նրա կարծիքով՝ այդ բեմադրությունում արդեն Զարենցն էր՝ ըմբոստ, մարտնչող, և հանդիսատեսը զգաց պոեմի ոգին և ուժը: Այս բեմադրության հետ է կապվում մի ուշագրավ դեպք: Ինչպես հետագայում հիշում է Սերգեյ Առաքելյանը. պրեմիերային ներկա էր գրականագետ, թատերագետ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ապագա տնօրեն, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, որը լսելով կուլիսներից հնչող պոեմի որոշ հատվածներ, կարծել է, թե ասմունքում է Վլադիմիր Աբաջյանը: Շնորհավորելով Տիգրան Լևոնյանին՝ նա ասել էր. «ինչ լավ է, որ ընտրել ես Աբաջյանին», մինչդեռ հատվածները կարդում էր հենց Տիգրան Լևոնյանը:

Տևական ընդմիջումից հետո՝ 2014 թվականին սեպտեմբերի 1-ին տեղի ունեցավ «Կրակե օղակ» օպերայի արցախյան պրեմիերան. օպերան ներկայացվեց Շուշիի ամրոցում [10, էջ 165-167]: Միջոցառումը նվիրված է Արցախի Անկախության օրվան և Ավետ Տերտերյանի ծննդյան 85-ամյակին: Բեմադրությունն իրականացվեց ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո, ՀՀ և ԼՂՀ մշակույթի նախարարությունների աջակցությամբ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նախաձեռնությամբ [11]:

Նախագծի հեղինակն ու գեղարվեստական ղեկավարն էր Սարինե Ավթանդիլյանը, դիրիժորը՝ Ռուբեն Ասատուրյանը: Ռեժիսոր՝ Մարիա Սահակյան, նկարիչ՝ Աստղիկ Ստեփանյան, խորեոգրաֆ՝ Արա Ասատուրյան: Խմբավարներն էին Ռոբերտ Մլքեյանը և Սոնա Հովհաննիսյանը: Մենակատարներն էին՝ բարիտոն Գուրգեն Բավեյանը, սոպրանո Ռուզան Մանթաշյանը, տենոր Լիպարիտ Ավետիսյանը և ասմունքող Արմեն Մարգարյանը: Ներկայացմանը մասնակցեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը և բալետային խումբը, «Սպեղանի» երգչախումբը (խմբավար՝ Սարինե Ավթանդիլյան), «Հովեր» պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան) և Հայաստանի պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Ռոբերտ Մլքեյան):

2022 թ. մարտի 13-ին լրացավ Եղիշե Զարենցի ծննդյան 125-ամյակը: Այդ առթիվ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ 2022 թ. ապրիլի 14-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մեծ հաջողությամբ բեմադրվեց Ա. Տերտերյանի «Սոմա. Կրակե օղակ» օպերան, որի լիբրետոն կազմել էր օպերայի բեմադրող ռեժիսորը՝ Արմեն Մելիքսեթյանը՝ ըստ Զարենցի «Ամբոխները խելագարված» և «Սոմա» պոեմների:

Ինչպես տեսանք՝ երաժշտական չարենցապատումի կարևոր էջերից մեկը՝ Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերան, թեև ընդհատումներով, սակայն շարունակում է իր բեմական կյանքը շուրջ 60 տարի:

Համբարձում Պերպերյանի ստեղծագործական դիմանկարը

Տարիներ առաջ՝ Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Համբարձում Պերպերյանի արխիվում ուսումնասիրություններ կատարելու ընթացքում գտա մի հետաքրքիր ստեղծագործության կլավիր: Երաժշտական չարենցապատումի այս մոռացված ու անծանոթ էջը սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանի (25.5.1905, Ադանա - 13.03.1999, Բոստոն) “Requiem Aeternam” (Կոմիտասի հիշատակին) կանտատն է, որը կոմպոզիտորի կենդանության օրոք մեծ հաջողությամբ կատարվել է բազմիցս, իսկ այժմ՝ մոռացության տրվել:

Մի քանի խոսք Համբարձում Պերպերյանի մասին [տե՛ս 1, էջ. էջ 544-553; 2, էջ 130-131; 3, էջ 43-45; 4, էջ 498-509; 6; 7, էջ 564-565]:

Հազիվ տասը տարեկան էր, երբ «մի օր եկան, 72 հարազատների կոները պարաններով միմյանց կապեցին ու սվինների տակ քայլեցրին դեպի անապատ: Հոգնատանջ քայլերով առաջ գնացող մանչուկը չէր կարող պատկերացնել, թե ինչ է սպասում իրեն: «Հեռվում երևաց Եփրատը. ջրերը հևում էին, կոհակները զարնվում ու զարնվում... Ու զարնվեցին Եփրատի ափին անմեղ մեղավորները: Անշնչացած մարդկանց թուլացած շղթան գետին տապալվեց... Մանուկն էլ ընկավ: «Չարկվեցինք, - մտածում էր նա: - Բայց ինչո՞ւ չեմ մեռնում, ինչո՞ւ զգում եմ, հա, երևի դեռ տաք եմ, հիմի պիտի մեռնիմ»» [4, էջ 498-499]: Նահատակների կողքով անցնում են դահիճները՝ սվինները մխրճելով անշնչացած մարմինների մեջ, ստուգելով՝ արդյոք բոլորին են սպանել: Փոքրիկ Համբարձումն զգում է սվինի քերծվածքը ոտքի վրա... Որոշ ժամանակ անց մանչուկը գիտակցում է, որ չի սպանվել, հրաշքով ողջ է մնացել: Փորձում է բարձրանալ, բայց թևերը կապկպված էին. նա կրծում է պարանները, քանդում կապանքները և ծունկի ելնելով՝ սողում: Մանչուկը հայտնվում է Հալեպի ամերիկյան որբանոցում: Շուտով որբերին տանում են Թուրքիա՝ ազգուրաց դարձնելու: Այս անգամ էլ Համբարձումը խուսափում է. նա սրընթաց գնացքից նետվում է անապատ...

1930-ին ավարտելով Աթենքի պետական կոնսերվատորիան որպես ջութակահար, խմբավար և կոմպոզիտոր՝ Հ. Պերպերյանը ծավալել է երաժշտական-մանկավարժական ու համերգային բուռն գործունեության:

1933-1963 թթ. Բեյրութում ծավալած բազմակողմանի երաժշտական-հասարակական գործունեության ընթացքում հիմնել է երգչախումբ, մանկական երգեցիկ խումբ և պարի անսամբլ՝ երկար տարիներ ղեկավարելով դրանք: Լիբանանում առաջին անգամ նա ներկայացրել է Արմեն Տիգրանյանի «Անուշ» և Տիգրան Չուխաճյանի «Կարինե» օպերաները, ինչպես նաև իր «Արեգնազան» և «Մանուկը բնության մեջ» օպերաները, իսկ 1956 թ. մայիսի 27-ին կազմակերպել հայ երաժշտությանը նվիրված փառատոնը. այդ օրը լիբանանյան կառավարությունը նրան պարգևատրել է արվեստի Ա կարգի ոսկյա շքանշանով:

Տասնամյակներ շարունակ Հ. Պերպերյանը որպես երաժշտության ուսուցիչ դասավանդել է Հ.Բ.Ը. Միության Հովակիմյան-Մանուկյան և Դարուի Հակոբյան վարժարաններում, Ճեմարանում, Մխիթարյան վարժարանում, Կիլիկիո

կաթողիկոսության դպրեվանքում, Սահակյան վարժարանում, ինչպես նաև Կիլիկյան և Մխիթարյան վարժարաններում և ամերիկյան քոլեջում:

Իր կազմակերպած հայրենաշունչ երգահանդեսներով մեծ ճանաչում ձեռք բերելով Բեյրութում, Տրիպոլիում, Հալեպում, Լաթաքիայում, Դամասկոսում, Երուսաղեմում, Աթենքում, Պոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Նիկոսիայում և Լառնակայում, Հ. Պերպերյանը 1963-ին տեղափոխվել է ԱՄՆ, դարձել ԱՄՆ և Կանադայի հայ գաղթավայրերի ՀԲԸՄ-ի ընդհանուր երաժշտական ղեկավարն ու տնօրենը:

Բոստոնում և Լոս Անջելեսում նա ներկայացրել է Տիգրան Չուխաճյանի «Կարինեն», համերգներով հանդես եկել Նյու Յորքում, Բոստոնում, Պրովիդենսում, Ֆիլադելֆիայում, Դետրոյտում, Քլիվլենդում, Չիկագոյում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Մոնրեալում և Մոնտեվիդեոյում:

Երաժշտական-մանկավարժական ու համերգային բեղմնավոր գործունեությանը զուգահեռ Հ. Պերպերյանը միաժամանակ ստեղծագործել է:

Երաժշտական թատրոնի համար նրա ստեղծագործություններից առաջինը «Թիթեռ» կամ «Մանուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետն է (1934), որը բեմադրվել է Բեյրութում և Ֆիլադելֆիայում: Երկրորդ՝ երեք արարից բաղկացած, «Շողիկ» օպերայի (1939) համար հիմք է ծառայել Հ. Թումանյանի «Երկրում» պոեմը: Երրորդ օպերան՝ «Արեգնազան» օպերա-կանտատը (1940), գրել է Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա: 1995-ին ավարտել է չորրորդ՝ «Թամար» օպերան:

Հ. Պերպերյանի խմբերգային գործերից են «Եկեղեցին հայկական» օրատորիան, «Խորհուրդ Վարդանանց» կանտատը և «Նաիրյան խմբերգեր» շարքը՝ բաղկացած չորս խմբերգերից, ինչպես նաև աշխարհիկ տեքստով առաջին ռեքվիեմը՝ Կոմիտասի հիշատակին նվիրված “Requiem Aeternam”-ը:

1977 թ. Հ. Պերպերյանը Վահան Թեքեյանի խոսքերով գրել է «Աղօթք Վաղուան Սեմին Առջեւ» կանտատը՝ մեցցո-սոպրանոյի և երգչախմբի համար: 1981-82 թթ. Հ. Պերպերյանն ավարտել է «Choral Symphonic» մեկ ժամ տևողությամբ 9 մասանի ծավալուն գործը՝ մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, որի հիմքում ընկած է Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» ստեղծագործության «Տեսիլքը» և «Գիւտին փառքը» հատվածները: Կոմպոզիտորի գրչին է պատկանում «Նաիրյան երգեր» շարքը՝ բաղկացած հինգ երգերից («Գյուլ հայրենի», «Զմրուխտ սարից հովեր կուգան», «Վարուժնակիս», «Գողթան երգը», «Լուսավորչի կանթեղը»), բազմաթիվ մեներգեր և խմբերգեր Ե. Չարենցի, Վ. Թեքեյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի խոսքերով, ինչպես նաև կոնցերտները՝ Զուլթակի և նվագախմբի կոնցերտը (1950, նվիրել է որդուն՝ Հրաչին) և Թավջութակի և նվագախմբի կոնցերտը (1949, նվիրել է որդուն՝ Վահենին):

Հ. Պերպերյանը սերտ կապեր է ունեցել Հայրենիքի հետ. 1961, 1978 և 1982 թվականներին հեղինակային համերգներով այցելել է Հայաստան:

Երաժշտական չարենցապատումի մոռացված էջը. Համբարձում Պերպերյանի “Requiem Aeternam” (Կոմիտասի հիշատակին) կանտատը

1972 թվականին Հ. Պերպերյանը գրում է “Requiem Aeternam” կանտատը [13] և նվիրում Հայոց մեծ եղեռնի 60-ամյա տարելիցին:

Կանտատի հիմքում Չարենցի համանուն՝ “Requiem Aeternam” (Կոմիտասի հիշատակին) ստեղծագործությունն է, որը բանաստեղծն սկսել է գրել Կոմիտասի հուղարկավորությունից երկու օր անց՝ 1936 թվականի մայիսի 30-ին և ավարտել նոյեմբերի 30-ի ուշ գիշերը [5, էջ 559-585]:

Կանտատի տեքստը, բնականաբար, հայերեն է, սակայն օտարախոս կատարողներին մատչելի դարձնելու նպատակով տեքստը տրված է նաև լատինատառ: Կանտատի տեքստը Դիանա Տեր-Հովանեսյանը և Մարգարետ Մարկոսյանը թարգմանել են անգլերեն, որը տեղ է գտել կլավիրի վերջում [13]:

Կանտատը բաղկացած է 14 համարից. խմբերգային և մենակատար համարներն իրար են հաջորդում առանց ընդմիջման: Կոմպոզիտորը Չարենցի պոեմից ընտրել է տարբեր հատվածներ: Այսպես՝ N 1-ում օգտագործել է պոեմի Դ, ապա՝ Բ տների տեքստերը, N 2-ում՝ Է և Ժ տները, N 3-ում՝ Զ, Ը և ԾԲ տները և այլն:

Պերպերյանի “Requiem Aeternam” կանտատը 1975-ին կատարվել է Դետրոյտում, ամերիկյան պրոֆեսիոնալ երգչախմբի կատարմամբ և արժանացել ջերմ ընդունելության: “Requiem Aeternam”-ը 1980-1981 համերգաշրջանում ամերիկյան և անգլիական երգչախմբերով ու նվագախմբով կատարվել է ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում [2, էջ 130]:

“Requiem”-ը հնչել է նաև Երևանում, հեղինակի ղեկավարությամբ:

1982 թվականին Հ. Պերպերյանին շնորհվեց Հայաստանի կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան ամենամյա մրցանակը՝ որպես «արտասահմանում լավագույն հայ կոմպոզիտոր-պրոպագանդիստի» [8]:

Նույն՝ 1982-ին “Requiem Aeternam”-ի կլավիրը կոմպոզիտորն իր մակագրությամբ նվիրել է «Հայաստանի գրականության և արուեստի պետական թանգարանին», և այսօր այն խնամքով պահվում է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Համբարձում Պերպերյանի արխիվում [13]:

Եզրակացություն

Երաժշտական չարենցապատումի վառ էջը դարձավ Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերան (1967), որն ընդհատումներով շարունակում է իր բեմական կյանքը:

Մինչդեռ Համբարձում Պերպերյանի՝ երգչախմբի և նվագախմբի համար գրված “Requiem Aeternam” կանտատը (Կոմիտասի հիշատակին), ցավոք սրտի, կոմպոզիտորի մահից հետո մոռացության է տրվել:

Ուստի անհրաժեշտ է, որպեսզի “Requiem Aeternam”-ն արժանանա հայ (և ոչ միայն հայ) խմբավարների ուշադրությանը, ընդգրկվի նրանց ղեկավարած երգչախմբերի երկացանկում և շարունակի իր ընդհատված համերգային կյանքը:

Իսկ դրա համար անհրաժեշտ է հրատարակել կանտատի նոտաները:

Գրականություն

1. Ասատրյան Ա. Եղեռնից փրկված երաժիշտը. Համբարձում Պերպերյան (սվիրվում է ծննդյան 110-ամյակին), «Հայոց ցեղասպանություն – 100. Ճանաչումից՝ հատուցում» Միջազգային գիտաժողովի (15-16 հոկտեմբերի, 2015) զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 544-553:
2. Բրուտեան Յ. Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփյուռ ընձիղները. Երեւան, «Անահիտ», 1996:
3. Բրուտյան Յ. Սփյուռքահայ երաժշտական մշակույթը. Երևան, «Սովետական գրող», 1982:
4. Բրուտյան Յ. Սփյուռքի հայ երաժիշտները. Երևան, «Հայաստան», 1968:
5. Եղիշե Չարենց, Երկեր. Երևան, «Սովետական գրող», 1983:
6. Համբարձում Պերպերեան, կենսագրական գիծեր, ԳԱԹ, Հ. Պերպերյանի ֆոնդ, N 21:
7. Մուրադյան Մ. Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբին. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
8. «Вестник», 1982, июнь-декабрь.
9. Рухкян М. Авет Тертерян. Творчество и жизнь. Ереван, «Наири», 2002.
10. Рухкян М. Звучащая музыка живая летопись эпохи. 1990-2020. Ереван, Авторское издание, 2023.
11. Рухкян М. Праздник истории, жизни и искусства, «Голос Армении», 2014, 11 сентября.
12. Тигранов Г. Армянской музыкальный театр, том 3. Ереван, «Айастан», 1975.
13. Hampartzoum Berberian, Requiem Aeternam, ԳԱԹ, Հ. Պերպերյանի ֆոնդ, № 14:

References

1. Asatryan A. Eghernic prkvac erajhishty. Hambardum Perperyan (nvirvum e cnndyan 110-amyakin), “Hayoc ceghaspanutyun – 100. Tanachumic hatucumm” Mijazgayin gitajhoghovi (15-16 hoktemberi, 2015) zekucumneri jhoghovacu. Yerevan, HH GAA “Gitutyun” hrat., 2016, ej 544-553.
2. Brutyan C. Hay erajhshtakan mshakoyti ashxarhaspiur yndiughnery. Yerevan, “Anahit”, 1996.
3. Brutyan C. Spyurqahay erajhshtakan mshakuyty. Yerevan, “Sovetakan grogh”, 1982.
4. Brutyan C. Spyurqi hay erajhishtnery. Yerevan, “Hayastan”, 1968.
5. Eghishe Charenc, Erker. Yerevan, “Sovetakan grogh”, 1983.
6. Hambardzum Perperean, kensagrakan gicer, GAT, H. Perperyani fond, № 21.
7. Muradyan M. Hay erajhshtutyuny XIX darum ev XX daraskzbin. Yerevan, HSSH GA hrat., 1970.
8. “Vestnik”, 1982, ijun-dekabr.
9. Ruhkryan M. Avet Terteryan. Tvorchestvo i zhizn. Yerevan, “Nairi”, 2002.
10. Ruhkryan M. Zvuchashhaja muzyka zhivaja letopis epohi. 1990-2020. Yerevan, Avtorskoe izdanie, 2023.
11. Ruhkryan M. Prazdnik istorii, zhizni i iskusstva, “Golos Armenii”, 2014, 11 sentjabrja.
12. Tigranov G. Armyanskoy muzyikalni teatr, tom 3. Yerevan, “Ayastan”, 1975.
13. Hampartzoum Berberian, Requiem Aeternam, GAT, H. Perperyani fond, № 14.

СТРАНИЦЫ МУЗЫКАЛЬНОЙ ЧАРЕНЦИАНЫ: КАНТАТА «REQUIEM AETERNAM» АМБАРЦУМА БЕРБЕРЯНА

АННА АСАТРЯН*

Для цитирования: Асатрян, Анна. «Страницы музыкальной чаренцианы: Кантата “Requiem Aeternam” Амбарцума Берберяна». *Искусствоведческий журнал*, N 1 (2024): 36–48. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-36

В статье представлены страницы из музыкальной чаренцианы.

Композитор, хормейстер и педагог Амбарцум Берберян (1905-1999) в 1972 году написал приуроченную к 60-летию Геноцида армян кантату для хора и оркестра «Requiem Aeternam».

В основу Кантаты легла поэма Чаренца «Памяти Комитаса: Requiem Aeternam», к написанию которой поэт приступил 30 мая 1936 года, спустя два дня после того, как гроб с телом Комитаса был предан земле, и завершил поздно ночью 30 ноября того же года.

Текст Кантаты на армянском языке, однако для того, чтоб сделать его доступным для иноязычных исполнителей, дана транскрипция латинскими буквами; английский перевод текста, выполненный Дианой Тер-Ованесян и Марзпетом Маркосяном, приводится в конце клавира.

Кантата состоит из 14 номеров; хоровые и сольные номера чередуются без пауз. Композитор выбрал различные отрывки из поэмы Чаренца. Так, в № 1 использованы тексты строф Դ [4-ой], затем Բ [2-ой], в № 2 – Է [7-ой] и Ժ [10-ой], в № 3 – Զ [6-ой], Ը [10-ой] и ԾԲ [42-ой] и т. д.

Первое исполнение «Requiem Aeternam» профессиональным американским хором в 1975 году в Детройте было тепло встречено публикой.

В Ереване «Реквием» прозвучал под управлением самого композитора. В 1982 году Союзом композиторов Армении Амбарцуму Берберяну была присуждена ежегодная премия имени Комитаса как «Лучшему зарубежному армянскому композитору-пропагандисту».

Ключевые слова: музыкальная чаренциана, Егише Чаренц, Амбарцум Берберян, Кантата «Requiem Aeternam» для хора и оркестра, 1972 год, 1982 год, Премия имени Комитаса Союза композиторов Армении.

* Директор Института искусств НАН РА, заведующая отделом музыки, заслуженный деятель искусств Армении, доктор искусствоведения, профессор, annaasatryan2013@gmail.com, статья представлена 20.09.2023, рецензирована 03.05.2024, принята к публикации 03.06.2024.

PAGES OF MUSICAL CHARENTSIANA:
CANTATA “REQUIEM AETERNAM” BY HAMBARDZUM BERBERIAN

ANNA ASATRYAN*

For citation: Asatryan, Anna. “Pages of musical Charentsiana: Cantata “Requiem Aeternam” by Hambardzum Berberian”, *Journal of Art Studies*, N 1 (2024): 36-48. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-36

The article presents pages from musical Charentsiana.

The composer, choirmaster and pedagogue Hambardzum Berberian (1905-1999), towards the 60th anniversary of the Armenian Genocide, wrote “Requiem Aeternam” for chorus and orchestra.

The cantata is based on Charents’ poem “Requiem Aeternam” (in the Memory of Komitas), which the poet started writing two days after Komitas’ body was consigned to the grave, on May 30, 1936, and finished at late hours on November 30 the same year.

The original text of the Cantata is in Armenian, yet, in order to make it readable for foreigner performers, the Latin-letter transcription is provided, along with the English translation of the text, done by Diana Ter-Ovanesyan and Marzpet Markosyan, placed at the end of the clavier.


The Cantata includes 14 sections; the choral and solo sections follow one another uninterruptedly. The composer selected various passages from Charents’ poem. Thus, in No. 1, the texts of verses Դ [4-th] then Բ [2-nd] are used, in No. 2 – Է [7-th] and Ժ [10-th], in No. 3 – Զ [6-th], Ը [10-th] and ԾԲ [42-nd], etc.

The first performance of “Requiem Aeternam” by a professional American choir in Detroit in 1975 was welcomed warmly by the audience.


In Yerevan, “Requiem” was performed under the composer’s baton. In 1982, the Composers’ Union of Armenia awarded Hambardzum Berberian the annual Komitas Prize “The Best Armenian Composer-Propagator Abroad”.

Key words: musical Charentsiana, Yeghishe Charents, Hambardzum Berberian, Cantata “Requiem Aeternam” for chorus and orchestra, 1972, 1982, Komitas Prize of Composers’ Union of Armenia.

* Director of NAS RA Institute of Arts, Head of the Music Department, Honored Art Worker of the RA, Doctor of Sciences (Arts), Professor, annaasatryan2013@gmail.com. The article was submitted on 20.09.2023, reviewed on 03.05.2024, accepted for publication on 03.06.2024.



Համբարձում Պերպերյանի "Requiem Aeternam" կանտատի
էջ 3՝ կոմպոզիտորի մակագրությունը



Համբարձում Պերպերյանի “Requiem Aeternam”
կանտատի տիտղոսաթերթը

4

REQUIEM AETERMAN

(1972)

Lyric by
Y. CHARENTZ

Music by
HAMPARTZOU BERBERIAN

No. 1

Larghetto (♩ = 48)

Piano

mf

f

mf

f

ff

© Copyright 1975 by Hampartoum Berberian, New York, N.Y.
International Copyright Secured Printed in U.S.A. All Rights Reserved

Համբարձում Պերպերյանի “Requiem Aeternam”
կանտատի սկիզբը